

Լ. ՄԵԼԻՔՍԵՐ-ՅԵԿ

Ի. ԳՐԻՇԱՇՎԻԼԻՆ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ-վրացական գրական կապերի ամրապնդման ուղղությամբ խոշոր դեր է կատարել վրաց ականավոր բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին։ Մեր այս հոդվածի նպատակն է ոչ թե հանգամանորեն անդրադառնալ այդ հարցին, այլ տալ մատենագրական տեղեկություններ Գրիշաշվիլու և հայ գրականության կապերի մասին։

Ի. Գրիշաշվիլու գրական գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանի. ա. նախասովետական (1904—1920) և բ. սովետական (1921-ից սկսած)։ Վերջինս, իր հերթին, կարելի է դիտել երկու ենթաշրջանով՝ մեկը 1921—1930 և մյուսը՝ 1930-ից մինչև այսօր։

Առաջին շրջանում Ի. Գրիշաշվիլին վրաց գրականության ասպարեզում հանդես է գալիս գերազանցապես իբրև սենտիմենտալ գրող, քնար-երգու, սիրո երգիչ։ Նա նույնպիսի մոտիվներ է երգում, ինչ որ մեր գրականության մեջ Ավ. Բասակյանը։

Ավ. Բասակյանն ու Ի. Գրիշաշվիլին գրեթե միատեսակ կամ միևնույն լարերով են երգում իրենց սիրած հայրենիքը, հայրենի օջախը, հայրենի կտուրը, այն տարբերությամբ, որ հայ բանաստեղծի շրթներում հնչում է Ալագյազ-Արագածը, Մանթաշը, Բինգյուլը, Շիրակը և այլն՝ հայ գյուղացիության շրջապատում, մինչդեռ վրաց բանաստեղծը պատում է հին Թբիլիսիի շուրջը՝ հանդերձ Նարիդալայով և Խարփուխ-Սեյդաբաբով, երբեմն տուրք տալով ուրբանիզմին, որը արտահայտված է պրոլետարիատին նվիրված նրա մի շարք բանաստեղծություններում։

Այս շրջանին է պատկանում, ի միջի այլոց, և ցարիզմի դեմ ուղղված բանաստեղծությունը, որը Ի. Գրիշաշվիլին գրել էր (և մի փոքր այլափոխված ձևով տպվեց) 1907 թվականին «Փշիր քամի» վերնագրով։

Ի. Գրիշաշվիլու ստեղծագործության երկրորդ շրջանը սկսվում է մի տեսակ «կիսալույսային» գործունեության ենթաշրջանով, որը տևում է մոտ 10 տարի (1921—1930), երբ բանաստեղծը իր ամբողջ եռանդը նվիրում է բանասիրական բնույթի գործերի մշակման, ինչպիսիք են՝ «Հովհաննես Թումանյանը վրացերեն», «Հին Թբիլիսիի գրական բոհեման», «Ալեքսանդր Ցաքարելու կոմեդիաները», «Ալեքսանդր Ճավճալաձեի երկերը» և այլն։

Այս տասնամյակի ընթացքում բանաստեղծը հորինում է ընդամենը 10-ի չափ բանաստեղծություն, որոնցից մեկը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի հիշատակին՝ կցվեց վերջինիս երկերի վրացերեն խարգմանություններին միհատորյակին 1924 թվականին, իսկ վեցը՝ հեղինակի ֆաքսիմիլի ձևով վիմագրական հրատարակությամբ լույս ընծայվեց առանձին բրո-

շուրջ 1930 թվականին¹։ Սրանք են. 1. «Մոլլան մինարեթի վրա», 1923 (№ 93), 2. «Դուգուկի սահառին էլ քամին չի բերում», 1925 (№ 95), 3. «Հանճարների ճակատագիրը Թրիլիսի շուկայում», 1927 (հայերեն չկա), 4. «Դու կայսսերվես», 1928 (№ 100), 5. «Զրույց արխիվից գուրս գալուց հետո, երբ օգուժ գարնան հոտ էր փչում», 1929 (հայերեն չկա), և 6. «Զրույց գրաշարի հետ իմ գրքի տպագրության միջոցին», 1929 (հայերեն չկա)։

Ի. Գրիշաշվիլու գործունեության երկրորդ շրջանի երկրորդ ենթաշրջանը բանաստեղծի տաղանդի վերելքի շրջանն է, երբ նա՝ սկսած 1930 թվականից և մասնավոր ՍՍՌԴ գրողների առաջին համագումարից (1935) հետո՝ լծվում է ստեղծագործական եռանդուն աշխատանքի։

Ստեղծագործական այս նոր ուղին Ի. Գրիշաշվիլին սկսում է հրաժեշտ առնել հին և հնի արտահայտիչ հին Թրիլիսին։

«Հրաժեշտ հին Թրիլիսին» կամ «Դուգուկի սահառին էլ քամին չի բերում» բանաստեղծության մեջ բանաստեղծը գրում է.

«Ով, հին Թրիլիսի, նըպատակն այն հին
Թողեց իմ սիրտը՝ լուռ հեռանալով...
Որոշվեց, պետք է փոխեմ իմ ուղին...
Թողնում եմ ես քեզ... դե, մընաս բարով...»։

Եվ այս մոմենտից սկսած չի լինում գրեթե ոչ մի՝ փոքր ի շատե նշանակալից՝ երևույթ կամ դեպք մեր սոցիալիստական մեծ հայրենիքի, նաև հայ ժողովրդի կյանքում, որն այսպես թե այնպես արձագանք չգրտներ Ի. Գրիշաշվիլու ստեղծագործության մեջ։

Ի. Գրիշաշվիլին արձագանքում է «Սասունցի Դավթի» հորեկյանին, մասնակցելով մեր խմբագրությանը 1939 թվականին լույս տեսած «Սասունցի Դավթի» ժողովածուում՝ իր հանրաձայնով «Մուխամադ-ով» (№ 133). հաջորդ տարին նա մասնակցում է Ա. Իսահակյանի ծննդյան 65-ամյակի հորեկյանին՝ վարպետին նվիրված իր սքանչելի ձոն-ոտանավորով (№ 135). 1945 թվականին նա մասնակցում է Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված հանդեսներին, երբ Հայկական ՍՍԽ կառավարության կողմից պարգևատրվում է հատուկ «պատվո գրով» և Հայկական ՍՍԽ արվեստի վաստակավոր գործչի կոչումով. 1948 թվականին մասնակցում է Խ. Արուսյանի անհայտացման 100-ամյակին նվիրված «հուշ-օրերին», գրելով «Վերք Հայաստանի հեղինակին» բանաստեղծությունը (№ 181). 1945 թվականին Ի. Գրիշաշվիլին արձագանքում է Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյա տոնակատարությանը, մասնակցելով Երևանում և Թրիլիսում կազմակերպված հորեկյան հանդեսներին, ուր անձամբ արտասանում է իր «Միքայել Նալբանդյանին» բանաստեղծությունը (№ 193)։

Ի. Գրիշաշվիլին հայ-վրացական բարեկամության, Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության և բովանդակ Սովետական Միության ադգերի համերաշխության սրտառու ճեղքին է։

Ուստի և միանգամայն հառկանալի է, թե ինչու մեր Նդիշե պատմագրի նման, որը գրում էր, թե

¹ Ի. Գրիշաշվիլի, Վեց բանաստեղծություն (էքզոսի լեքսի), Թբ., 1930, 16 էջ (վրացերեն)։

«Ջուզուբյուն է մայր րարյաց,
Անգուզուբյուն՝ ժող չաբյաց»:

Ի. Գրիշաշվիլին ևս շեշտում է՝

«Եղրայբուբյունը սառաֆխանա է,
Թըշամուբյունը՝ էժանագին ձորձ»:

Իսկ նրա «Կուր և Արաքս» (Մտկվարի գա Արեղի) բանաստեղծությունը (1939)² կարծես թե ձայնակցում է Սայաթ-Նովայի, Ն. Իարաթաշվիլու, Խ. Արուսյանի, Ռ. Պատկանյանի և այլոց երկերում արձարժված թեզին. որով զույգ գետերը զույգ ժողովուրդների ազգակցությունն են պատկերացնում:

*

Գրականագիտական-հետազոտական գործերը բավական լայն տեղ են բռնում Ի. Գրիշաշվիլու ստեղծագործությունների մեջ: Եվ ահա այդ գործերի մի տեսակ, թեև համառոտ՝ ամփոփումը տրված է «Գրականագիտական պրպտումներ» (Լիտերատուրուլի նարկվելերի) վերնագիրը կրող ժողովածուի մեջ, որը 1952 թվականին լույս տեսավ Թբիլիսիում:

Անկախ սրանից Ի. Գրիշաշվիլու աշխատասիրությունը և խմբագրությունը լույս են տեսել առանձին հատորներ, նվիրված այս կամ այն հեղինակին, կամ գրական խմբակներին, որոնցից մի քանիսը լիովին թե որոշ չափով շփվում է հայ գրականության հանգուցային խնդիրների հետ:

Այսպիսիք են՝ «Սայաթնովա», «Հին Թբիլիսիի գրական բոհեման», «Գ. Սունդուկյանը», «Հովհ. Թումանյանը» և այլն, որոնց մասին արժեք փոքր ի շատե մանրամասն խոսել:

1. «ՍԱՅԱԹՆՈՎԱ»

Այսպիսի վերնագրով է լույս ընծայված 1918 թվականին Ի. Գրիշաշվիլու հրատարակություն-մենագրությունը, որով երիտասարդ բանաստեղծը լուրջ տեղ գրավեց վրաց գրականագիտության բնագավառում և որով նա ստեղծեց մի տեսակ կամուրջ հայ գրականագիտության հետ շփման ուղիով:

Հրատարակությունը բաղկացած է 2 մասից, ա. «Սայաթնովան և հին Թբիլիսին» էտյուդը (էջ 5—85), և բ. Սայաթնովայի վրացերեն խաղերի editio princeps-ը, 28 հատ բանաստեղծությամբ (էջ 95—124), հանդերձ «Բառարան»-ով (էջ 125—134):

Եվ այս հրատարակությամբ, կարելի է համարձակ ասել, հիմք դրվեց վրացական սայաթնովագիտությանը, քանի որ այն զարթեցրեց վրաց հասարակության մեջ և առանձնապես գրական ու գիտական շրջաններում հետաքրքրություն դեպի Սայաթ-Նովայի անձնավորությունը, նրա ժամանակաշրջանը, նրա ստեղծագործությունը և այլն, որոնց նվիրեցին իրենց հոգվածները, մենագրությունները և նույնիսկ առանձին հրատարակու-

¹ «Սասունցի Դավիթ», ժողովածու, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի խմբագրությամբ, Թբիլիսի, 1939 էջ 3: Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Թբիլիսի, 1949, էջ 108 (վրացերեն):

² Նույն տեղում, էջ 125 (Հմմտ. «Լիտերատուրա դա խելովներա», 1945, № 28):

թյունները՝ Կ. Կեկելիձեն, Ա. Բարամիձեն, Գ. Լեոնիձեն, Ծալոր Բալասա-
շվիլին, տողերիս գրողը և շատ ուրիշները։ Առանձին գրքով են հրատարակ-
ված Գիորգի Լեոնիձեի «Բանաստեղծ Սաաթնավան» (Մոսկվայի Սաաթնա-
վա), Թրիլիսի, 1930, 63 էջ, և տողերիս գրողի զույգ գործերը. ա. «Սաաթն-
ավայի ու լինելը. քննական-կենսագրական էսյուդ» (Սաաթնավաս Վի-
նաորա. կրիտիկուլ-բիոգրաֆիկուլի էսյուդի), Թր., 1930, VIII+165+015 էջ,
և բ. «Սաաթնավայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն» (Սաաթնավաս
սոմիուր լեքսթա սրուլի կրեբուլի), թարգմանություն տարբերակներով,
առաջարան-ներածականով, ծանոթագրություններով և բառարան-ցանկե-
րով, Թր., 1935, 131 էջ։

Ի դեպ նշենք, որ հատուկ սիրով դեպի Սաաթնավայ համակված է
Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունը «Սաաթնավայի քյամանչով» կամ
«Սաաթնավայի սազով» (№ 143), որին կից պիտի, անշուշտ, հիշվի և
Հովհ. Թումանյանի «Սաաթնավան» խաղի թարգմանությունը վրացերեն,
որը Ի. Գրիշաշվիլին նախ տպեց «Մնաթորի» ամսագրում (1948 № 4, էջ 24),
այս և Հովհ. Թումանյանի «Ընտիր երկերի» 1948 թ. հրատարակության
մեջ (էջ 18)։

Բր՝ «Սաաթնավայ» նշանակալից մենագրության մեջ Ի. Գրիշաշվիլին
հատկապես ընդգծում է այն, թե ինչն եղավ առիթ այդպիսի գործին ձեռ-
նամուխ լինելուն։

Առիթը՝ 1914 թ. մայիսի 15-ին (հին տոմարով) Թրիլիսիի Մեյդանի
ս. Դեորդ եկեղեցու բակում Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ կառուց-
ված Սաաթնավայի հուշարձանի հանդիսավոր բացումն էր, որին, ի թիվս
այլոց, ներկա էին և վրաց հասարակության ներկայացուցիչները, որոնք
դիմել էին երիտասարդ բանաստեղծին հետևյալ խոսքերով.

«Թրիլիսեցի մարդ ես, մայրդ հայուհի, ըստ երևույթին կհիշես Սա-
աթնավայի վրացերեն խաղերը, կամ լսած կլինես նրա կապը ժամանակի
վրացիների հետ... լավ կլինեք զուլս բերելը այսպիսի մի աշխատություն,
ժողովելը Սաաթնավայի վրացերեն խաղերը, և այս նրա կենսագրության
կցումով հրատարակելը, որպեսզի վրաց հասարակությունն իրազեկ լինեք
այս հաղվադյուտ բանաստեղծ-երգչի և նրա ժամանակի հետ» (էջ 7)։

Եվ սրանից հետո Ի. Գրիշաշվիլին հանձն է առնում «Սաաթնավայ»
թեմային նվիրված պատասխանատու գործը, որը և կատարում է ամենայն
սիրով և բարեխղճությամբ։

Սաաթնավայի խնդրին Ի. Գրիշաշվիլին անդրադարձավ նաև հատուկ
հոդվածով, որ գրեց 1945 թվականին՝ հորեկեական օրերի կապակցությամբ,
այսպիսի վերնագրով. «Սաաթնավայի հիշատակին (նրա մահվան 150-
ամյակի առթիվ)», և որը մտել է նրա «Գրականագիտական պրպտումներ»
ժողովածուի մեջ, 1952, էջ 216—219։

Վերջինումս, խոսելով Սաաթնավայի քնարի մասին, Ի. Գրիշաշվի-
լին համեմատում է նրան Ալ. Ճավճավաձեի և Գր. Օրբելիանու ստեղծա-
գործության հետ, որոնք գրում էին մոլորամբաղի ձևով, և վերհիշում է
1914 թ. մայիսի 15-ի տոնակատարությունը Սաաթնավայի հուշարձանի
բացման առիթով։

2. ՎԵՐԻՆ ԹԵԻԼԻՍԻԻ ԳՐԱԿԱՆ ԲՈՂԵՄԱՆՆ

Բ. Գրիշաշվիլու բանասիրական-գրականագիտական գործերի շարքում առանձնապես աչքի է ընկնում Վերին Թրիլիսիի գրական թոհման (Ձվիլի Թրիլիսիս լիտերատուրուլի թոհմա) կոչված մենագրությունը, Թրիլիսի 1927, 258 էջ, ուր նա մանրամասն խոսում է Թրիլիսիի կինտո-դարաչո-խելներ (սեչուխավորներ) հին նիստուկացի, արհեստավորական-համա-քարություն և այլ սպեցիֆիկ երևույթների մասին, ուր որոշ դեր էին խաղում Թրիլիսիի հայերը:

Ի. Գրիշաշվիլին խոսում է, ի միջի այլոց, Թրիլիսահայ Գեորգ Սկան-դարնովայի (էջ 101 և այլն), Հաղիրիի (էջ 272 և այլն) և ուրիշների մասին, որոնք որոշ անուն էին հանել վրացական պոեզիայի ասպարեզում նույնիսկ սեր վաստակել վրաց հասարակության որոշ խավերում:

Հիշյալ դեմքերին նվիրված տեսություններին կցված են լուսանկարներ վրացերեն ֆաբսիմիլներով (էջ 195), նաև հայադղի նկարիչներ՝ Ա. Շամշինյանի (էջ 205) և Պոլարեկովի (էջ 209—216) կատարած էսքիզների պատճենները:

Գրքին կցված է նաև դժվարիմաց բառերի «Բառարան» (էջ 235—236):

3. Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՊԵՆՍԵՐԸ ՎՐԱՅԵՐԵՆ

Հայ մեծ թատերագիր Գարրիել Սունդուկյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ 1950 թ. Թրիլիսիում լույս տեսավ նրա երկերի միահատորյակը վրացերեն, որի տիտղոսաթերթը կարգացվում է այսպես.

«Գ. Սունդուկյանց. Պենսեր, Ի. Գրիշաշվիլու խմբագրությամբ, առաջարանով, ծանոթագրություններով և բառարանով. Սարճոթա Մձե-րալի (Սովետական գրող) հրատարակչություն, Թրիլիսի 1950, 8000 տի-րաթով:

Գրքը բաղկում է Գ. Սունդուկյանի լուսանկարով և վրացերեն ֆաբսիմիլներով, որին հետևում է Ի. Գրիշաշվիլու «Ներածական» հոդվածը՝ «Սունդուկյանցը վրացական բեմի վրա» (էջ 5—28), որը 1952 թ. արտատպվեց նույնի «Գրականագիտական պրպտումներ» ժողովածուում, էջ 220—266, մի այլ, այն է՝ «Գարրիել Սունդուկյանցը և վրաց հասարակայնությունը» վերնագրով: Նույնը լույս տեսավ նաև հայերեն թարգմանությամբ՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 7, էջ 119—133:

Գրքի բուն նյութն են կազմում Գ. Սունդուկյանի հետևյալ պենսերը.

ա. «Պեպո», իրեն՝ հեղինակի՝ թարգմանությամբ (էջ 1—64)

բ. «Պաթարալա», թարգմ. Իոսեթ Բաքրաձեի (էջ 65—139)

գ. «Քանգաձ օջախը», թարգմ. նույնի (էջ 141—209)

դ. «Էլի մեկ զոհ», թարգմ. Վ. Արաշիձեի (էջ 210—281)

ե. Բաղնրսի բոխա, թարգմ. նույնի (էջ 283—311)

զ. «Գիշիլիվան սարը խեր է», թարգմ. նույնի (էջ 313—327)

է. «Օսկան Պետրովիչն էն կինքում», թարգմ. Գ. Տեր-Դավթյանի (էջ 328—341):

Բուն նյութին կցված են Ի. Գրիշաշվիլու կազմած «Ծանոթագրություններ» (էջ 343—358) և «Բառարան»-ը (էջ 359—366), այլև բազմաթիվ պատկերներ և աֆիշաների ընդօրինակությունները:

Տեղեկագիր 2—3

Սույն հրատարակության մեջ ծառայություն մատուցեց վրաց հասարակությանը հայ մեծ թատերագրի ստեղծագործությունը նրան մատչելի դարձնելու համար, որի կապակցությամբ զգալիորեն աշխուժացավ հետաքրքրությունը Գ. Սունդուկյանով նաև վրաց թատրոնում, ուր վերակենդանացավ «Պեպո»-ի բեմագրումը սիստեմատիկ կերպով, այն էլ շատ հաջող (երբեմն հայ դերասանների մասնակցությամբ)։

Սույն հրատարակությունը լավ ընդունելություն գտավ վրաց մամուլում։

Ցավալի է միայն, որ այս միհատորյակում ամփոփված չեն Գ. Սունդուկյանի մյուս երկերն ևս, որոնք վաղուց առկա են վրացերեն թարգմանությամբ, օրինակ. «Վարինկի վեպերը», իսկ 1911 թ. օգոստոսի 11-ին Բորջոմիում գրած «Կտակ»-ը ամբողջական զետեղված է գիտական հրատարակչի «Ներածական» հոդվածում իբրև լույս մեջբերում (ցիտատ)։

Մի շարք գծեր Գ. Սունդուկյանի կյանքից Ի. Գրիշաշվիլին բնութագրում է իր «Հին թատրոնում» (Զվել թեատրշի) գրքում, Թբ., 1948, էջ 95—96։

Հիշատակության արժանի է նաև «Ձկնորս Պեպոյի երգը» (№ 106), որը Ի. Գրիշաշվիլին հորինել է «Պեպո» կինոֆիլմի ձևակերպման առնչությամբ, հատուկ պատվերով (առաջին անգամ տպվեց «Կոմունիստի» թերթում, 1935, № 97, ապա Բ. Գրիշաշվիլու բանաստեղծությունների միհատորյակում, Թբ., 1949, էջ 74)։

4. ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ի. Գրիշաշվիլին տարեցտարի ալլևալլ առիթով հանդես է գալիս հորեկենական նիստերում կամ գիտական սեսիաներում զեկուցումներով հայ-վրացական գրական կապերի թեմայի շուրջը, ուր հարուստ նյութ է ցուցադրում հայ և վրաց գրական, գիտական և թատերական գործիչների կենդանի շփումների, համագործակցության և փոխադարձ օժանդակության մասին։

Այս զեկուցումները համառոտագրությունների ձևով իր իսկ ստորագրությամբ կամ լույս ինֆորմացիոն նյութի բնույթով սովորաբար տպվում են Թբիլիսիի և Երևանի՝ վրացական, ռուսական և հայկական մամուլի էջերում, օրինակ՝ «Գրական թերթ»-ի 1948 թ. № 7-ում և այլուր։ Հիմնականում այդ զեկուցումները պատում են Սայաթ-Նովայի, Գ. Սունդուկյանի, Հովհ. Թումանյանի և ուրիշների շուրջը, որոնց մի առ մի հիշատակությունը, իհարկե, հեռու կտաներ մեզ։

Սակայն բոլորից ուշագրավ է Գրիշաշվիլու բիրլիոգրաֆիկ գործը, թեև զգալիորեն հնացած՝ «Վրաց-հայկական գրական փոխհարաբերությունները» վերնագրով, որի համառոտությունը տպված է վրացական «Գրական թերթ»-ի (Լիտերատուրուլի գազեթի) 1934, № 28-ում։

Աշխատությունը բաղկացած է 2 մասից։

¹ Տես՝ Ա. Մուրվալյանի գրախոսականը՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1931, № 2, էջ 78—80։

Առաջին մասն ընդգրկում է «Հայ հեղինակները վրացերեն» նյութը, որ հիշված է 40-ի չափ հայ հեղինակների անուններ, որոնց երկերի վրացերեն թարգմանիչներն են՝ Եվանգուլով, Ղ. Գարապետյան, Իլիա Արուստիան, Ս. Ավչյան, Ս. Փաշալիշվիլի, Ա. Առաքելյան, Բարիլինա, Կ. Ճիճի-նաձե, Գ. Բաշինջաղյան, Պ. Միրիանաշվիլի, Ա. Շանիձե, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վ. Գալիբեկով, Մարիջան, Տ. Տաթև, Լ. Բաղաշվիլի, Ի. Աղլա-ձե, Տ. Փրոսպյան, Գ. Գեդեանով (Միրաղյան), Գ. Բաբայով, Գ. Ածղուբեկի, Ի. Իմեդաշվիլի, Օբուլի Մուշա, Վ. Ռուսաձե, Կ. Կալաձե, Կ. Նադիրաձե, Ալիսագյան, Ա. Արսենիշվիլի, Գ. Տեր-Դավթյան, Ա. Թումանյան, Ա. Դավթյան, Ի. Գրիշաշվիլի և ուրիշները:

Երկրորդ մասն ընդգրկում է «Վրացի գրողները հայերեն» նյութը, շուրջ 70 հեղինակների, որոնց երկերի թարգմանիչներն են՝ Բաստամյան, Դ. Ասատուր, Տ. Փրոսպյան, Ղ. Կարապետյան, Լ. Միրիմանյան, Ա. Մեհրաբյան, Ա. Առաքելյան, Ա. Խոնթաբալյան, Գ. Մելոյան, Լ. Մելիքսեթ-Բեկ, Դավթյանները, Վ. Տերյան, Գ. Գեդեանով-Միրաղյան, Ա. Թումանյան, Ս. Ավչյան, Ն. Ջաբրյան, Գ. Մուրադյան, Ռ. Աղաբաբ, Ս. Տարոնցի և ուրիշները:

Բնական է, որ զույգ տեսությունները, որ տպված էին 1934 թվականին, կարոտ են լրացման՝ վերջին երկու տասնամյակի նյութերի հիման վրա, որը, հավանական է, Բ. Գրիշաշվիլին աստիճանաբար կատարում է, բայց դեռ առիթ չի ունեցել ամփոփելու ու լրիվ ձևով հրատարակելու:

5. ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բ. Գրիշաշվիլու բանասիրական բնույթի գործերը ունեն այն մեծ արժանիքը, որ նրանց կցված են «բառարաններ» հազվագյուտ և դժվարըմբռնելի բառերի մեկնաբանությամբ:

Սակայն այս բառարանները մի մասն են կազմում այն ստվար աշխատության, որ Ի. Գրիշաշվիլին տասնյակ տարիներ առաջ ձեռնարկել է՝ ի մի հավաքելով հազարավոր բառեր ու դարձվածքներ, որոնց շատ-շատերն ընդհանուր են վրաց և հայոց լեզուներում, ուստի և այդ, եթե կարելի է այսպես ասել, «թաղոնային» (դարաչոխելների) բառարանի հրապարակումով հայագիտությունն ևս որոշ չափով պիտի շահի ու երախտապարտ լինի կազմողին:

Այդ՝ «դարաչոխելական բառերի բառարանը», որի մասին Ի. Գրիշաշվիլին ակնարկում էր իր «Սայաթնովա» մենագրությանը կցված բառարանի նախաբանում (էջ 127), պատրաստ է եղել տպագրության դեռևս 1918 թվականին, սակայն ինչ-ինչ պատճառով նրա հրատարակությունը հետաձգվել է և ցարդ չի հաջողվել:

Վերջապես, չի կարելի չհիշել Ի. Գրիշաշվիլու վաստակը հայ գրականության գոհարների վրացերեն թարգմանությունների խմբագրի դերում, որ արտահայտվել է Հովհ. Թումանյանի պատմական զույգ պոեմների նկատմամբ:

ա. «Հովհ. Թումանյան. Սասունցի Դավիթը, թարգմանություն Սուրեն Ավչյանի, խմբագրություն Ի. Գրիշաշվիլու» տեա՝ «Սասունցի Դավիթ», ժողովածու, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի խմբագրությամբ, [Թբիլիսի] Պետհամալսարանի հրատարակչություն, Թբիլիսի, 1939, էջ 101—134:

ր. Վեդի. Թումանյան. Թմրկարերդի առումը», պոեմ, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի թարգմանությամբ և ներածականով. Սախելգամի, 1939, Թբիլիսի. տիտղոսաթերթի մյուս էջում նշված է՝ խմբագիր Ի. Գրիշաշվիլի:

* * *

Բ. Գրիշաշվիլու գրական գործունեության նշանակալից բնագավառն է գեղարվեստական չափածոյի և արձակի թարգմանությունները այլևայլ լեզուներից՝ հայերենից, ռուսերենից, ադրբեջաներենից և այլն, ուր առաջին տեղն են գրավում թե քանակով և թե որակով թարգմանությունները հայերենից, որով բանաստեղծը մեծ ծառայություն մատուցեց, մի կողմից, հայ գրականությանը՝ նրա լայն մասսայականացման դժով վրաց ժողովրդի մեջ, իսկ մյուս կողմից՝ վրաց գրականությանը, հարստացնելով վերջինս հայ գրողների գրչից ելած գոհարներով:

Այսպիսիք են թարգմանությունները Հովհ. Թումանյանից, Գ. Սունդուկյանից, Հ. Հակոբյանից, Շիրվանզադեից, Հով. Հովհաննիսյանից, Նար-Դոսից, Գ. Դոդոխյանից, Ազատ Վշտունուց, Գուրգեն Մահարիից, Գ. Գրիգորյանից, Նադա Հովնաթանից, ժողովրդական էպոսից և այլն:

1. Հովհ. Թումանյան

Դեռևս Հովհ. Թումանյանի կենդանության օրոք Ի. Գրիշաշվիլին, ինչպես և մի շարք այլ վրացի բանաստեղծները, մասնակցել է տրագիցիոն համաքույթներին (ժուրֆիքսներին)՝ նրա՝ Թումանյանի՝ բնակարանում, որին Վ. Տերյանը մի տեսակ հումորով «Թումանյանի պալատ» է կոչում («Թումանյանի պալատում ով որ քեֆի չի նստել, նա չի տեսել դեռ խընդում, աշխարհ չի տեսել»)¹:

Ահա այս համաքույթների ժամանակ Ի. Գրիշաշվիլին «ուստ» էր գրել Հովհ. Թումանյանի և հանդիսականների առաջ ձեռնամուխ լինելու մեծանուն հայ բանաստեղծի երկերի վերածման վրացերենի:

Այդ «ուստը» Ի. Գրիշաշվիլին փայլուն կերպով կատարեց՝ տրամագրելով վրաց հասարակությանը Հովհ. Թումանյանի չափածո և արձակ երկերի միհատորյակը, որի առաջին հրատարակությունը լույս տեսավ վերջինիս մահվան տարեդարձին՝ 1924 թվականին²:

¹ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, IV, Երևան, 1924, էջ 57:

² Որպեսզի հայ ընթերցողը թուր պատկերացում չունենա Հովհ. Թումանյանի երկերի վրացերեն թարգմանությունների պատմության մասին, մենք նպատակահարմար ենք դնում նշել, որ հայ բանաստեղծի երկերը թարգմանվել են թե Ի. Գրիշաշվիլուց առաջ և թե Ի. Գրիշաշվիլուց հետո: Թարգմանիչներն են, բացի Ի. Գրիշաշվիլուց՝ 1. Իոսեբ Բաբբաձեն՝ ղուլդ ոտանավորների՝ 1933 թ., 2. Ղադարոս Կարապետյանը՝ 3 արձակ երկի՝ 1908, 1911 և 1925 թթ., 3. Կոնստանտին Զիճինաձեն՝ մի ոտանավորի՝ 1916 4. Վալերիան Գափրիլյանը՝ «Ախթամար»-ի՝ 1938 թ., 5. Վասո Գորգաձեն՝ «Մարո»-ի՝ 1938 թ., 6. Իվան Բեդարովը՝ 20 հեքիաթների՝ 1938 թ., 7. Լ. Մելիքսեթ-Քեկը՝ «Թմրկարերդի առումը» պոեմի՝ 1939 թ., 8. Սուրեն Ավչյանը՝ «Սասունցի Դավիթը» պոեմի՝ 1939 թ., 9. Լադո Ասաթիանին՝ մի բանաստեղծության՝ 1939 և 1945 թթ., 11. Լ. Աստվածատուրո-

Առաջին հրատարակութեանը Ի. Գրիշաշվիլին կցել էր Հովհ. Թումանյանի հիշատակին նվիրված իր զգայուն և սրտառուչ բանաստեղծութիւնը (№ 91), որը չնչին վերամշակումով մտել է նույն՝ Ի. Գրիշաշվիլու բանաստեղծութիւնների միհատորյակի մեջ: Ասկա գալիս էր «Առաջարան»-ը, գրված մեծ զգացմունքով և սիրով դեպի վաղամեծ Հովհ. Թումանյանը, որը (առաջարանը) Ի. Գրիշաշվիլին ավարտում էր հետևյալ խոսքերով.

Շնրա (Թումանյանի) ընտանիքի հարկի տակ մենք այլևս չենք մտնի ուրախ դեմքով, ու այլևս տոնական խնջոյքներին չենք մասնակցի խմելով մեր Հովհաննեսի կենացը: Թող այս թարգմանութիւնը լինի հատուցումն այն թանկագին ննջեցյալի, որի հիշատակը չի սառել մեր սրտերում: Ես իմ ուխտս կապարեցի:

Միհատորյակում ամփոփված են Ի. Գրիշաշվիլու կողմից մեծ վարպետութեամբ կատարած թարգմանութիւնները թե՛ չափածոից և թե՛ արձակից:

1. Ուտանավորներից. 1. Հին օրհնութիւն, 2. Եթե իմ վերջին հայացքը մնա, 3. Այվազովսկու նկարի առջև, 4. Երկու սև առաւ, 5. Ինչո՞ւ այդպես, 6. Հայոց լեռներում, 7. Հայոց վիշտը, 8. Բմ երգը, 9. Նվեր Վրաստանի բանաստեղծներին, 10. Տաղով եկավ, 11. «Թագավորն ու շարչին»-ից վերջին 4 տողը, 12. Դառնակներ:

2. Լեզենդներ-բալլադաներից. 1. Շունն ու կատուն, 2. Փարվանա, 3. Մի կաթիլ մեղր, 4. Անրախտ վաճառականներ:

3. Պոեմներից. 1. Անուշ:

4. Արձակից՝ 1. Դիքոր, 2. Եղջերուն, 3. Խեղճի պատիվը, 4. Անմարդը, 5. Նեսոյի քարաբաղնիսը, 6. Տերն ու ծառան, 7. Դաջ Նաղարը:

2. Գ. ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆ

Ի. Գրիշաշվիլին ոչ միայն Գ. Սունդուկյանի պիեսների միհատորյակի գիտական հրատարակիչն է և Գ. Սունդուկյանի՝ վրաց թատրոնի ու վրաց հասարակութեան հետ ունեցած կապերի հետազոտողը, այլև նրա մի երկի թարգմանիչը:

Ի նկատի ունենալ Գ. Սունդուկյանի 1911 թ. օգոստոսի 11-ին Բորջոմիում գրած ու «Մշակ»-ի խմբագրութեանն ուղարկած «Կտակ»-ը, որը Ի. Գրիշաշվիլու թարգմանութեամբ է հայտնի վրաց ընթերցողին, տպված «Թեմի» թերթում 1912 թ., № 65, ապա՝ Գ. Սունդուկյանի պիեսների միհատորյակում, Թբ., 1950, էջ 24—27:

Վր՝ մի արձակ երկի՝ 1943 թ., 12. Գրիգոր 8 եց խլաձեն՝ մի ոտանավորի, 1948 թ. 13. Արտ. Դավթյանը՝ մի հեքիաթի՝ 1948 թ.:

Հիշյալ միհատորյակն ունեցավ 4 հրատարակութիւն. առաջինը 1924 թ., երկրորդը 1930 թ., երրորդը՝ մեր խմբագրութեամբ և առաջարանով՝ 1938 թ. և, վերջապես, չորրորդը և դեռևս վերջինը՝ Մ. Ալեքսիձեի (Մարիջանի) խմբագրութեամբ, սակայն առանց առաջարանի՝ 1918 թվականին:

Ավելի ընդարձակ Ի. Գրիշաշվիլու մասին, իբրև Հովհ. Թումանյանի երկերի վրացերեն թարգմանչի, տես Վ. Գեվորգյանի շահեկան հոդվածը. «Հովհ. Թումանյանը և Ի. Գրիշաշվիլին»՝ ժողովածուում «Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամութիւնը», Երևան, 1954, էջ 113—132:

3. Հ. ՀԱԿՈՒՅԱՆ

Հակոբ Հակոբյանից Ի. Գրիշաշվիլին թարգմանել է 2 նմուշ. ա. «Իմ սերը» (Միդվարս), 1922, որ տպվեց «Կոմունիստի» թերթի 1936 թ., 24.1V, № 145-ում, նույնը նաև «Պիոների» ժուռնալի 1936 թ. № 6-ում, և բ. «Բուլշևիկ է Շիր-կանալը» (Շիրաքարխի), 1924, որն ամբողջությամբ տպվեց «Սալիտերատուրո գաղեթի»-ի 1932 թ. № 6-ում և «Մնաթորի» ժուռնալի 1937 թ. № 11-ում, իսկ միմիայն «Վերջարան»-ը (էպիլոգի)՝ «Լիտերատուրուլի Սաքարթվելո»-ի 1938 թ. № 23-ում:

Տարօրինակ է միայն, որ վրացերեն թարգմանությունը Ի. Գրիշաշվիլին ավել է մի այնպիսի վերնագիր՝ «Շիրաքարխի», որը կարող է շփոթություն առաջ բերել վրաց ընթերցողի մեջ, քանի որ վրացական Շիրաքը կամ Շիրաքին՝ դա Խորի գետի, վաղեմի Կամրեչովանի (հունարեն Կամրիզենի) ավազանն է, մինչդեռ հայկական Շիրակը, որին նվիրված է Հ. Հակոբյանի բանաստեղծությունը, պատմական Շիրակի դաշտն է, նույն Շորագյալը Ախուրյանի (Արփա-չայի) ավազանում: Հետևապես թյուրիմացություններին տեղիք չտալու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի «Շիրաք-արխի» արտահայտությունը ուղղվի «Շիրակիս արխի»-ի:

4. ՇԻՐՎԱՆՋԱԴԵ

Առանձին սիրով է թարգմանված Ի. Գրիշաշվիլու կողմից Շիրվան-գաղեի «Նամուս»-ը, որին թարգմանիչը կցել է զմլար հասկանալի բառերի իր իսկ կազմած «Դառարան»-ը:

Այս թարգմանությունը լույս է տեսել 2 անգամ. նախ՝ 1931 թվականին, 256 էջ, և ապա՝ 1948 թվականին, 192 էջ, վերջինս մեր առաջարանով (էջ 1—4) և խմբագրությամբ:

5. ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հովհ. Հովհաննիսյանից Ի. Գրիշաշվիլին թարգմանել է հանրածանոթ «Արտավազդ»-ը, որ տպված է «Դրոշա» ժուռնալի 1931 թ., 9.XI, № 19—20-ում:

6. ՆԱՐ-ԴՈՍ

Նար-Դոսից Ի. Գրիշաշվիլին թարգմանել է լոկ մի նմուշ «Մեր թաղը» գործից, այն է՝ «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց» (բա մոխղա բոցա շաքարդանչի շաքարի ար աղմոչնդա)՝ «Պիոների» ժուռնալի 1934 թ., № 2 և 3-ում:

7. Դ. ԴՈՂՈՒՅԱՆ

Ի. Գրիշաշվիլին մասնակցեց դոց. Իվ. Բեգլարովի ձեռնարկած գործին՝ Դևորգ Դոգոսյանի բանաստեղծությունները վրացերենի վերածելու գծով:

Ահա այդ աշխատանքի արդյունքն է 3 նմուշի թարգմանությունը Դ. Դոգոսյանից. ա. «Արեվ» (Մսիսագմի), որ տպվեց «Պիոների» ժուռնալի 1938 թ. № 8-ում, նաև Դ. Դոգոսյանի երկերի միատորյակում (Իվ. Բեգ-

լարովի խմբագրությունը՝ Թրիլիսի, 1939, էջ 254), ր. «Մանուշակ» (Իա), նույն տեղում, 1939, էջ 252, և գ. Ա. Տ. (Ա. Տ.), նույն տեղում, էջ 259:

8. ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

Աղատ Վշտունուց Ի. Գրիշաշվիլին թարգմանել է 2 նամուշ. ա. հանրածանոթ «Ադրբեջան» (Ադերբայջան), որը առաջին անգամ տպվեց «Կոմունիստի» թերթի 1929 թ., 16.IV, № 136-ում և ապա Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունների միատորյակում, 1949, էջ 569—572, և ր. «Երկու սեր»-ը (Ջեմիլե, կամ Երկու սեր), որ տպվեց «Քարթուլի մծերլորա» ժուռնալի 1930 թ. № 2-ում:

9. ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Գուրգեն Մահարիից Ի. Գրիշաշվիլին թարգմանել է «Գերեզմանատուն» պատմվածքը, որ տպագրվել է «Գանաթլերիս մուշակի» ժուռնալի 1929 թ. № 10-ում, նույնը՝ «Դրոշա»-ում 1932 թ. № 12-ում:

10. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի. Գրիշաշվիլու թարգմանությունյամբ առկա է բաթումեցի ծերունի հայ բանաստեղծ, այժմ հանգուցյալ Գրիգոր Գրիգորյանի 3 տունից բաղկացած ոտանավորը՝ «Մտորմունք ծովափին» (Փիքերերի զղվիս պիրաս), որ տպվեց «Դրոշա» ժուռնալի 1932 թ., 15.III, № 5-ում:

Բանաստեղծությունը ձայնակցում է Ն. Բարաթաշվիլու, Ռ. Պատկանյանի և ուրիշների համապատասխան գործերին:

11. ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Նաղաշ Հովնաթանի (1661—1722) սքանչելի բանաստեղծությունը «Տաղի վերայ Դուրջստանայ գողալներին» Ի. Գրիշաշվիլին հաջող կերպով վերածում է վրացերենի դեռևս 1933 թվականին և նույն թվականին տպում «Մնաթորի» ժուռնալի № 5-ում, էջ 186—187, հանդերձ մեր ներածական հոդվածով, ուր տրված է Նաղաշ Հովնաթանի կյանքի և ստեղծագործության համառոտ տեսությունը (էջ 181—185):

Ի. Գրիշաշվիլու թարգմանությունը մենք վերահրատարակեցինք մեր «Հայոց հին գրականության պատմության» մեջ (վրացերեն, Թբ., 1941, էջ 187—188), կցելով այդ թարգմանությանը Ի. Գրիշաշվիլու կողմից ինչ-ինչ պատճառով բաց թողած՝ «տաղի» նախավերջին տունը:

«Աթլազ են հագել հաւասար,
Սամուր, վալափուշ սարէսար»
և այլն:

Ի. Գրիշաշվիլու այս թարգմանությունն իր նախնական՝ թերի վիճակով, զժրախտաբար, կրկնված է նրա բանաստեղծությունների միատորյակում, 1949, էջ 573—574:

12. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ

Ի. Գրիշաշվիլին մեծ երախտիք ունի հայկական ֆուկլորից մի շարք նմուշները վրացերենի վերածելու կամ, ավելի ճիշտն ասած, «հարմարեցնելու» ուղղությամբ:

Այսպես, օրինակ, ներկա գտնվելով 1904 թ. 15.VI հայ հին թատերագիր Էմին Տեր-Գրիգորյանի (1855—1939) հանրածանոթ «Սեչոյի թուղը» վոդևիլի բեմադրությանը Թբիլիսիում, ուր այն հայկական թատրոնի ռեպերտուարից երկար ժամանակ չէր իջնում, Ի. Գրիշաշվիլին հիշյալ բեմադրության տպավորությամբ հորինում է վոդևիլ 1 գործողությամբ «Տիմոթեի թուղը» (Տիմոթեա լեղվի) վերնագրով, որը մտցվում է Թբիլիսիի և գավառական վրաց թատրոնների ռեպերտուարի մեջ:

Հետագայում Բ. Գրիշաշվիլու վոդևիլը հրատարակվում է առանձին գրքույկով՝ «Տիմոթեի թուղը. վոդևիլ 1 գործողությամբ Ի. Գրիշաշվիլու (մտահղացումը հայերենից), Թբիլիսի, 1911»:

Բացի այս բոլորից, Ի. Գրիշաշվիլին վերածել է վրացերենի հետևյալ երկերը՝ «Փիշանգի», ժուռն. «Ջեջիլի»-ում 1923 թ. № 11—12, և «Սուլդի և Բուլդի» (Սուլդի դա Բուլդի, Սոմխուրի խալխուրի էպոսիդան), Սարխտգամիի հրատարակությամբ, Թբիլիսի, 1935, և այլն:

* * *

Բավական երկար է Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունների հայերեն թարգմանությունների պատմությունը:

Տողերիս գրողը պատիվ ունեցավ լինելու առաջին թարգմանիչը նրա բանաստեղծությունների հայերեն լեզվով, տպագրելով Leonis ստորագրությամբ «Սաթարալա» շարաթաթերթի 1910 թ. № 50-ում «Փչի՛ր, հողմիկ» ոտանավորը, որի բնագիրը «Բքրոլե քարո» վերնագրով լույս էր տեսել «Նիշագուրի» շարաթաթերթում «Գրի-Գրի» ստորագրությամբ՝ ցենզուրական պայմանների շնորհիվ որոշ չափով փոփոխված ձևով:

Բ. Գրիշաշվիլու բանաստեղծությունների հայերեն թարգմանություններն երկիցս հրատարակվել են «Հատընտիր»-ի ձևով, նաև ցրված են զանազան պարբերականներում և ժողովածուներում:

«ՀԱՏԸՆՏԻՐ»-Ի (1941)

Մա առաջին փորձն է Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունների հայերեն թարգմանությամբ ի մի ամփոփման և առանձին գրքով հրատարակելու գծով:

Գրքի տիտղոսաթերթը միմիայն հայերեն է, և կարգացվում է այսպես. «Ի. Գրիշաշվիլի, Հատընտիր, խմբագրությամբ Գեղամ Սարյանի, Առաջարան Ս. Հարությունյանի, Հայպետհրատ, Երևան, 1941», in 16՝ — 88 էջ, տիրած 3000, գինը 3 ո. 50 կ.:

Գրքում ամփոփված է 51 հատ թարգմանություն 3 բաժնով, որոնցից մեկը ընդգրկում է 19, մյուսը 15 և երրորդը 17 միավոր:

Թարգմանությունները մեծ մասամբ կատարված են ըստ ուսերեն տողատակի թարգմանության:

Թարգմանիչներն են՝ Ավ. Իսահակյան, Մ. Կորյուն, Մ. Խերանյան, Աղավնի, Վ. Գրիգորյան, Հ. Պողոսյան, Գ. Սարյան, Վեսպեր, Գ. Բորյան և Ս. Կապուտիկյան:

Գիրքը բացվում է բանաստեղծի լուսանկարով և ֆաքսիմիլով, նաև Ս. Հարությունյանի «Առաջարան»-ով (էջ 5--12):

Գրքում, դժբախտաբար, տեղ են դրել մի շարք անճշտություններ, օրինակ՝ բանաստեղծի իսկական ազգանունը Մամուլաշվիլի-Մամուլովը դարձել է «Մաշուաշվիլի» (էջ 5) և այլն:

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (1951)

Սա երկրորդ փորձն է Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունների հայերեն լեզվով առանձին գրքով հրատարակելու գծով, որին հիմք է ընդունված 1949 թ. Թբիլիսիում հրատարակված բնագիրը, այսինքն «Ի. Գրիշաշվիլու միհատորյակը» (LV+624 էջ):

Գրքի տիտղոսաթերթն է վրացերեն և հայերեն.

«Ի. Գրիշաշվիլի. Բանաստեղծություններ. Խմբագրեց՝ Հայկական ՍՍԽ ԳԱ-ի իսկական անդամ Ավետիք Իսահակյանը. Հայպետհրատ, Երևան 1951», in 16³—280 էջ, տիրաժր 4000, գինը կազմով 8 ռ. 75 կ.:

Գրքում ամփոփված է 160 հատ թարգմանություն 9 բաժնով, I—Փառք Առաջնորդին, 10, II—Հայրենիք և հաղթանակ, 19, III—Իմ երկիրը, 7, IV—Նոր Թբիլիսին, 9, V—Ձոներ, 12, VI—Եղբայրության քանդակները, 8, VII—Սիրո երգեր, 6, VIII—Աճող սերունդ, 23, և IX—Հին տետրից (1906—1920), 73:

Թարգմանությունների ճշող մասը կատարված է վրացերեն բնագրից, մնացածը՝ ուսերեն տողատակի թարգմանության միջնորդությամբ:

Թարգմանիչներն են՝ Ա. Մուրվալյան, Սարմեն, Աղավնի, Պ. Միքայելյան, Ս. Կապուտիկյան, Ս. Տարոնցի, Վ. Դավթյան, Գ. Սարյան, Մ. Կորյուն, Մ. Մարգարյան, Մ. Խերանյան, Վ. Գրիգորյան, Խ. Դաշտենց և Ավ. Իսահակյան:

